

Ի. ԴՈԼԳՈՎՍԿԻ

ԱՌԱՋԻՆ

ՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՎԱՆԴԱՑԱԾ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ

ԹԱՐԳՄ. Ա. Դ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1930

ՌՈՍՏՈՎԻՆԻՍԿԱՅԻՆ

619

7-71

619
7-71

С. 1931-К
158
608

„ՄՈՒՐՃ-ՄԱՆԳԱՂ“-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 22

ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ Ի. ԴՈԼԳՈՎՍԿԻ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ,
ՀԻՎԱՆԴԱՑԱԾ ԳՅՈՒՂԱՏՆԵՐ
ՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ

НАУКА - ТЕХНИКА
ИНСТИТУТ
ИСТОРИКО-ЭТНОГРАФИИ
Академии Наук
СССР

ԹԱՐԴՄ. Ա. Դ.

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԲՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎ-
ԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԹՈՍՏՈՎ Դ-Վ.
1930

3 APR 2013

0 4 AUG 2010

Ветврач И. ДОЛГОВСКИЙ

Первая помощь заболевшим

С. Х. ЖИВОТНЫМ.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРАЙНАЦИЗДАТ



60522-67

Газетно-книжная типография Севкавполиграфтреста. Ростов на Дону.

Крайлит № 09-124

заказ № 5679

тираж 1500

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ամեն տարի հազարավոր գյուղատնտեսական կենդանիներ են վոչնչանում միայն այն պատճառով, վոր նրանց իր ժամանակին անհրաժեշտ ոգնություն չի տրվում: Ամեն մի գյուղացի պետք է իմանա և կարողանա առաջին ոգնություն հասցնել հիվանդացած կենդանիներին: Անասնի առողջապահությունը հենց իրենց—գյուղացիների գործն է: Այս գրքուկում բերված են միայն այն հիվանդությունները, վորոնք պետք է իմանա յուրաքանչյուր գյուղացի, նրա համար, վորպեսզի նա կարողանա առաջին ոգնություն հասցնել, մինչև հիվանդացած կենդանուն անասնաբույժի կամ բուժակի (ֆելդշերի) կողմից նայելը:

Այստեղ չի խոսվում այն վարակիչ հիվանդությունների մասին, վորոնց բժշկելու ձևերն առանձին և ինքնուրույն լուսաբանություն են պահանջում:

ՀԵՂԻՆԱԿ:

ԱՆԱՍՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ԻՐ ԳՈՐԾՆ Ե

Գիտնականներն ասում են, վոր ավելի հեշտ է հիվանդության առաջն առնել, քան բժշկել: Գյուղատնտեսության մեջ նաև անգամ տեսնում ես, վոր կենդանու հիվանդանալու և նույնիսկ սատկելու պատճառը հենց ինքը տերն է հանդիսանում: Առանձնապես փաստակար է տնային կենդանիների առողջության համար մեր «վոչինչ, կանցնի», յուր կզգնա» վերաբերմունքը:

Պատահում է, վոր ձին կաղում է: Փոխանակ անհրաժեշտ ոգնություն հասցնելու ու հետո անասնաբույժին կանչելու, տերը վորոշում է՝ «վոչինչ, կանցնի», ու շարունակում է նրան աշխատեցնել: Ու հետո տեսնում ես, վոր յերկրորդ-յերրորդ ուրը նա արդեն բոլորովին հրաժարվում է աշխատելուց և շատ անգամ ամիսներով տիրոջ վզին բեռ է դառնում, իսկ տնտեսությունը փաս է կրում: Բայց լինում է և ավելի վատ, յերբ հիվանդացած ձին յերկար հիվանդությունից հետո կամ ընկնում է, կամ հաշմանդամ է դառնում:

Մի ուրիշ որինակ ել բերենք. բոլորին հայտնի յե, վոր այնպիսի հիվանդությունը, ինչպիսին է սիբիրական ախսր, հեշտ կերպով անցնում է հիվանդ կենդանուց առողջի վրա: Մանավանդ փաստակար են անասունների առողջության համար սիբիրախտից ընկած կենդանիների դիակները: Յեվ այստեղ «վոչինչ, կանցնի», «վոչինչ, չի վարակվի»-ն մեծ կորուստներ է բերում գյուղատնտեսությանը: Փոխանակ վարակիչ դիակը թաղելու անասունների հատուկ գերեզմանոցում, թաղում են հենց բակում և այդպիսով ընդմիշտ վարակում բակը սիբիրախտով:

Ավելի ևս վատ, յերբ դիտելը նետում են բնակարանից վոչ հե-
ռու մի վորեւ տեղ, վորից ախտը տարածվում է հեռու տարա-
ծության վրա: Յերբեմն եւ անասունն ընկնում է սիրերախտից
վոչ թե տանը, այլ արոտատեղում: Փոխանակ իսկույն և յետ
հետացնելու դիտելը, նա որերով մնում է այնտեղ ընկած և նույն
իսկ տերը մաշկում է կաշին, չնայած վոր դա արգելված է և
այդպիսով ախտը բերում արոտատեղից իրեն տունը: Մինչդեռ
սիրերախտի տարածվելու առաջը կարելի չէ վաղորդ առնել և
այդպիսով պահպանել անասնի առողջութիւնը և մինչև անգամ
մարդուս առողջութիւնը, վորովհետև հայտնի չէ, վոր սիրեր-
ախտը հեշտութեամբ անցնում է անասնից մարդու վրա:
Հերիք է միայն նախազգուշական պատվաստ անել բոլոր կեն-
դանիններին (ձիերին, յեղջուրավոր անասուններին, վոչխար-
ներին, խոզերին), իր ժամանակին խնամքով հեռացնել դիակ-
ներն ու թաղել անասունների գերեզմանոցում, մաքրել անա-
սունների շուր տալու տեղերը, առողջացնել արոտատեղերը—
և կտեսնեք, վոր սիրերախտի հետքն եւ չի մնա:

Նախազգուշական պատվաստումը կատարվում է միայն
այն դեպքում, յեթե տեղը այս կամ այն վարակիչ հիվանդու-
թեամբ վարակված է համարվում:

Միևնույն նախազգուշական միջոցներն անց են կացվում
և այլ վարակիչ հիվանդութիւնների դեմ, որինակ, խլացավի
(սապ), դարադի, կասաղության, խոզի ու բռնի սարափո-
խիկ հիվանդութիւնների դեմ:

Հեշտ է հանգցնել լուցկին, քան թե նրանից վառված խոտի
դեղը: Հեշտ է վարակիչ հիվանդութեան տարածման առաջն առ-
նել, քան հետո նրան արմատախիլ անել, գործադրելով դրա վը-
րա թե ույժ, թե ժամանակ և թե փող:

Պեճ է միշտ հիշել, վոր անասունի առողջութիւնը սիրոյ
կամ բնակչութեան ձեռքին է:

Շինեցե՛ք անասունի գերեզմանոցներ յե՛վ պահեցե՛ք այն
մաքուր կերպով, ի՛ր ժամանակին հեռացե՛ք դիակները յե՛վ
այդպիսով վարակիչ հիվանդութիւնների առաջն առե՛ք:

ՀԻՎԱՆԴ ԱՆՍՈՒՆ ՆՌԱԶԻՆ ՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑ- ՆԵԼԸ ԴԺՎԱՐ ԲԱՆ ԶԵ

Ամեն մի գյուղացի պետք է իմանա, թե ինչպե՛ս պետք է
առաջին անհրաժեշտ ոգնութիւն հասցնել հիվանդ կենդանուն:
Հաճախ պատահում է, վոր հիվանդացած կենդանուն պետք է
ոգնել առանց ժամանակ կորցնելու, իսկույն և յետ, բայց մոտիկ
ըջապատում վոչ անասնաբույժ կա և վոչ բուժակ: Մովորա-
բար կենդանու հանկարծակի հիվանդանալու ժամանակ գյուղա-
ցին գլուխը կորցնում է և խորհուրդ ու ոգնութիւն է խըն-
դրում առաջին պատահած մարդուց: Դյուղացու գլուխ կորցնե-
լույն ոգտվում են հեքիմները, տատմայրերը, վհուկները, վո-
րոնք ապրում են հենց գյուղացու անգործութեան և տգիտու-
թեան հաշվով: Տնտեսութիւնը փասից փրկելու համար գյուղա-
ցին պետք է աշխատի վորքան կարելի չէ շուտ ազատվել այդ-
պիսի տգիտների ծառայութիւններից և սովորել ճշտորեն, ինչ-
պե՛ս գիտութիւնն է սովորեցնում, առաջին ոգնութիւն հաս-
ցնել կենդանիններին, մինչև անասնաբույժի կամ բուժակի գալը:

Պետք է միշտ հիշել, վոր ամեն տեսակ հիվանդութիւննե-
րի ժամանակ, հիվանդ կենդանուն պետք է առանձնացնել առող-
ջից: Դա նրա համար է հարկավոր, վոր շատ անգամ իսկույն
և յետ չի կարելի վորոշել հիվանդութիւնը: Կարող է թվալ,
վոր անասունը հոգնելուց է, վոր քիչ է ուտում և խմում, իսկ
հետո պարզվում է, վոր վարակվել է վորեւ տարափախիկ հի-
վանդութիւնով:

Նույնպե՛ս պետք է մեկ-յերկու շաբթով անջատել առաջին
անգամ տնտեսութեան մեջ բերվող կենդանուն, մանավանդ,
յեթե այդ տնտեսութեան մեջ ագնիվ ցեղի և թանգարժեք անա-
սուն կա: Դա անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի տնտեսու-
թեան մեջ վարակիչ հիվանդութիւն չգցել, մանավանդ այն
դեպքում, յերբ հայտնի չէ, վոր տվյալ կենդանին առողջ տըն-
տեսութիւնից կամ տնից է գալիս:

Վորպեսզի հիվանդացած կենդանուն առաջին ոգնութիւն
կարողանանք հասցնել, պետք է իմանալ հաճախ պատահող՝ անա-
սունների հիվանդութիւնների հատկանիշները:

ՁԻԱՆ ԱՂԻՔՆԵՐԻ ԽԻԹ (ԺԱԿՈՒՆ)

Աղիքների ծակունը ձիերի միջև ամենատարածված հիվանդություններից մեկն է: Յեթե խիթով հիվանդացած ձիուն իր ժամանակին ոգնություն չգալ, նա առհասարակ մի քանի ժամից հետո սատկում է:

Հիվանդությունը սովորաբար վրա յե հասնում հանկարծակի. ձին հրաժարվում է կեր ու ջրից, կամ միմիայն բերանն է առնում, բայց չի ուտում, հաճախ նայում է իր փորին, առաջի փողերով փորում է գետինը, պառկում է, գլորվում մեջքի վրա, վեր է թռչում, նորից պառկում, իսկ յերբեմն ել ուղղակի վայր է ընկնում:

Այդպիսի անհանգիստ դրությունը փորի սաստիկ ցավիցն է լինում. ձին շուտ-շուտ թքում է ու միզում, տնքում է, աչքերը տառապանք են արտահայտում:

Հիվանդությունը լինում է զանազան պատճառներից.

1. Արոտում կամ տանը շատ ուտելուց ստամոքսն ուռչում է.
2. Արագ վազեցնելուց հետո վարսակով կամ դարիով շափից դուրս կերակրելուց.

3. Վատ, փչացած և բորբոսնած կամ կեղտոտ կերից աղիքների սաստիկ բորբոքում է առաջանում.

4. Սառը ջուր տալուց ստամոքսի ու աղիքների պենդ է առաջանում.

5. Մեծ քանակով յոնջա կամ առվույտ (լուցեռնա) ուտելուց կերը ստամոքսում թթվում է, փորից աղիքները գազով լցվում, ուռչում են.

6. Թունավոր խոտեր ուտելուց աղիքները սաստիկ կերպով բորբոքվում են ու ցավում.

7. Ստամոքսում կամ աղիքներում փորի վորդ կամ բոռի թրթուր լինելուց ստամոքսը խոցոտվում է և մինչև անգամ պատռվում.

8. Մեզի յերկար զսպելուց միզապարկում ցավ ու բշտիկներ են առաջանում.

9. Մի քանի հիվանդությունից, որինակ, սիբիրախտից, փորը կապվում է, յերբեմն ել լուծում, փորից սաստիկ ծակոց է լինում.

10. Այս հիվանդությունից ել ձին հաճախ կծուտող է դառնում:

ԲԺՋԿԱԿԱՆ Ո՞ՐՆՈՒԹՅՈՒՆ

Սովորաբար հրավիրված հեքիմը սկսում է հիվանդացած ձիուն արագ կերպով վազեցնել տալ: Վոչ մի դեպքում հիվանդ ձիուն չի կարելի քշել, այդ բոլորովին աննպատակ է, նույնիսկ այդպիսով յերբեմն ձիուն կարելի յե դուր տեղը սպանել: Իսկ յեթե ձին սկսում է վայր ընկնել գետին, փորից կարող է առաջ գալ ստամոքսի, միզափամփուշտի և այլ ներքին օրգանների պատռում, այդ դեպքում կարելի յե ձիուն թեթև կերպով ման ածել. դա ձիուվրա լավ է ազդում: Հիվանդանալու ժամանակ կենդանուն պետք է ամենից առաջ ծածկել տաք տապճակով և տեղավորել նրան արձակ ու տաք սրահում, փորտեղ պետք է փռած լինի շատ չոր խոտ: Քրտինք գալու ժամանակ ձիու մարմինը սրբել, չորացնել: Ծակունի ժամանակ, վոր պատահում է շատ ուտելուց, կամ սառը ջուր խմեցնելուց, պետք է կենդանու փորի վրա ցանել գոգուղ նյութեր. որինակ, վերցնել բեկն (սկիպիդար), խառնել կես ջրով և 10 րոպե այդ խառնուրդով հարել ծղոտով կենդանու փորը, գլխավորապես աջ կողմը: Յուրաքանչյուր կես ժամից այդպիսի փորհարելը կրկնել:

Հարելուց հետո ձիուն պետք է ծածկել տաք տապճակով: Կեր չտալ: Ջուրն ել, այն ել տաք, տալ այնքան, փորքան կենդանին ուզի: Հետանցքը զգուշությամբ ձեռքով դատարկել: Դրա համար մատների յեղունկները պետք է կարճ կտրել, յուղով ձեռքը ոծել ու հետո ձեռքը կոխել հետանցքը, փորքան վոր մտնի ու դուրս տալ այնտեղից աղբը: Ապա պետք է հետևել ձեռքը չփնասել, փորովհետև ձին յերբեմն հանկարծակի վայր է ընկնում: Ապա տաքուկ սապնաջրով գրեխիկ (կլիստիր) անել, կրկնելով այդ յուրաքանչյուր 15 րոպեյից: Ներս կարելի յե տալ 1 ֆունտ գլաուբեր աղ, տաք ջրի մեջ լուծած, կամ մի շիշ

ձեթ, բայց ավելի լավ է մինչև անասնաբույժի կամ բուժակի գալը վոչ մի դեղ չտալ, մանավանդ վոր ծակունի ժամանակ բերանով դեղ ածելը անվտանգ չէ: Վոչ մի դեպքում թույլ չըտալ հեքիմական բժշկում, որինակ՝ մորթու տակ քիստ կոխելը, յերակից արյուն առնելը, ականջ կտրելը, կճղակ կտրելը, պոչի ծայրի կտրելը և այլն:


Այս ամենը ձիուն միայն դուր չարչարանք է պատճառում: Ծակունի դեմ ամենալավ և միակ դեղը հիվանդության կանխելն է: Ուստի չպետք է սառը ջուր տալ, մանավանդ վաղած ձիուն, իսկ յեթե այդ պատահում է, պետք է ջրի մեջ ձգել մի բուռն խոտ կամ ծղոտ, վորպեսզի ձին կարողանա ծծի աստիճանաբար: Չպետք է ձիուն բորբոսնած, փչացած, կեղտոտ կեր տալ, չպետք է չափից դուրս կեր տալ, այլ չափով:

Ձիու ծակունը լինում է համախ սիրոջ անուշադիր լինելուց:

ԿԵՆԴԱՆԴԱՆՔԻ ՓՈՐԻ ՈՒՌՁՈՒՄԸ (ՓՈՐՈՒՌԵՑԷ)

Փորի ուռչումով հաճախ հիվանդանում են կովերն ու վոչխարները: Հիվանդությունը պատահում է գլխավորապես գարնանն ու ամառը:

Այս հիվանդության նշանները սրանք են. թափանք սաստիկ կերպով ուռչում է և զրանից կարծես ուռչում է ամբողջ փորը. բայց առանձնապես դուրս է պրծնում վորառակի ձախ կողմը:



Փ Ո Ր Ո Ւ Ռ Ե Ց Ք. 1. Ծակելու տեղը փորուռեցքի ժամանակ.
2. Նշար. 3. Ձեռքի դիրքը ծակելու ժամանակ:

Փորուռեցքը առաջ է գալիս մեծ քանակով գազեր հավաքվելուց, իսկ գազերն առաջանում են ստամոքսի կերի խիստ թթվելուց: Հիվանդ կենդանին հրաժարվում է ուտելուց, վորոճալը դադարում է, շնչառությունն հաճախանում է, աչքերը լցվում են արյունով, շրթերը դառնում են կապտագույն, կենդանին տնքում է: Այս հիվանդությունը վտանգավոր է նրանով, վոր կենդանին կարող է շուտով խեղդամահ լինել:

Հիվանդությունն առաջ է գալիս չափից դուրս հյութալի խոտ ուտելուց անձրեկից հետո, յերբ խոտը պատած է լինում ցողով կամ յեղյամով, կամ ջրած, թաց ու կուլտի մեջ տաքացած կանաչ խոտ ուտելուց:

Մանավանդ վտանգավոր է մեծ քանակով ասպատ, մատաղ յոնջա, վիկ (պուրճակ), բազուկի տերևներ, վոչ թարմ կաղամբի տերևներ և այլ փչացած, փտած և բորբոսնած յեմ ուտելուց: Վտանգավոր է նաև կանգնած ու հոտած ջուրը:

ԲԺՂԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր հոգսը պետք է այն լինի, վոր վորքան կարելի յե շուտ դուրս բերել գազերը թափանից: Դրա համար պետք է.

1. Փսխեցնել տալ—բերանը սանձահարելով նավթի կամ ձյութի մեջ թաթախած թոկով: Փսխելու ժամանակ ստամոքսից հեռոճեստե դուրս են գալիս նաև գազերը:
2. Հետանցքով գրեխիկ (կլիստի) անել սառը սապնաջրով.
3. Փորը սառը ջրով լվալ, իսկ յեթե կարելի յե, կենդանուն սառը ջրի մեջ մտցնել.
4. Փորը փաթաթել սառը ջրի մեջ թրջած քաթանով 1-2 ժամով: Ներս ընդունել տալ 2 սեղանի գդալ անուշադիր սպիրտ մի շիշ ջրի մեջ խառնած: Դրան ել խառնել մի բաժակ ողի: Կարելի յե տալ նաև մի շիշ սապնաջուր:

Իսկ յեթե խեղդվելու վտանգ է լինում, գործ են ածում մի առանձին գործիք—նշտար, վորով ծակում են թափանք «քաղցի փոսի» տեղից: Բայց ավելի լավ է այս բանն անել տալ անասնաբույժին կամ բուժակին, կամ թե չե պետք է գործին լավ ծանոթ լինել: Դադի դուրս գալուց հետո նշտարը պետք է

պահել ծակած տեղն ելի 15-20 ընդէս: Նշտարը հանելուց հետո պետք է ծակած տեղը ոռել ձյութով: Գաղերի հեռացնելուց հետո կենդանուն պետք է տալ կիսով չափ ձեթի հետ խառնած ջուր: Կեր տալուց մի առժամանակ պետք է ժուժկալ լինել:

Փորուռեցքից կարելի չէ խուսափել, յետոյ չոր կերից դեպի կանաչեղեն անցնելը լինի աստիճանաբար: Տաքացած կերը պետք է տալ քիչ չափով, խառնելով այն չոր կերի հետ: Անձրեկի կամ յեղյամի տակ գտնված կերը պետք է նախ չորացնել: Կանաչ կերից հետո յերբեք ջուր չտալ:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՅՈՒՂԱՅԻ ՊԵՏՔ Ե ՆՇՏԱՐ ՈՒՆԵՆԱ

ՅԵՎ ԻՄԱՆԱ ՆՐԱ ԳՈՐԾԱԾԵԼԸ

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԿԵՆԴԱՆՈՒ ԽԵՂԴՎԵ- ԼՈՒ ԳԵՊՔՈՒՄ

Դժվար չէ վորոշել, թե ինչով է կենդանին խեղդվել: Սովորաբար խեղդվող կենդանին յերկարացնում է վիզն ու զլուխը, վախեցած դեմք է ունենում, աշխատում է հագել ու միևնույն ժամանակ թուքը հոսում է, կենդանին փխտում է:

Այս դժբախտությունները պատահում են ավելի հաճախ խոշոր յեղջուրավոր անասունների և հորթերի հետ, յերբ կենդանիներին կերակրում են ամբողջակի կարտոֆիլով կամ մանր արմատապտղով, կամ հում, խոշորակի կտրտած դրումով:

ԲԺՂԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Ոգնություն հասցնելիս կենդանուն սկզբում տալիս են մի բաժակ ձեթ: Ձեթից հետո պետք է ձեռքով սղմելով—դրսից առարկան խթել հետ կամ առաջ, նայած վոր կողմն է հեշտությամբ գնում: Պետք է աշխատել դեմ ընկած առարկան քշել դեպի կոկորդը (բողազը) և յետոյ այդ աջողվի, պետք է բաց անել բերանը, ձեռքով դուրս քաշել լեզուն և աշխատել մատ-

ներով բռնել առարկան: Իսկ յետոյ չի աջողվում, պետք է փորձել, դրսից սղմելով, առարկան խթել դեպի ստամոքս: Այդ դեպքում վերցնում են մատի հաստության և ձկուն մի ձիպոտ, վորի ծայրին ամրացնում են ձեթի մեջ թրջած մի բարձիկ, փափուկ վուշից կամ շորից կազմած, բաց են անում բերանը, դուրս քաշում լեզուն, ներս կոխում բողազով ձիպոտը ու կամաց-կամաց հրհրելով, առարկան խթում դեպի ստամոքս:

Նախ քան ձիպոտը բողազով անցկացնելը կովին պետք է սանձել վորևէ վորորած յերեսաբբիչով, կապելով այն պոզերից ամուր կերպով, վորպեսզի ծնոտներն իրար չկպչեն: Յետոյ ձիպոտն անցկացնելու ժամանակ կենդանին սկսի հագել, պետք է ձիպոտը դուրս հանել ու նորից ներս մտցնել, մինչև վոր կենդանին սկսի կուլ տալ:

Ձիուն ոգնություն հասցնելու դեպքում գործ են ածում այսպիսի միջոց. վորպեսզի ձին շուտ կուլ տա ձեթը, պետք է ձեթ տալու ժամանակ ապտակով խփել ձիու գավակին (թարբին), բայց ապտակել հանկարծակի կերպով, այնպես վոր ձին վախենա: Ձին, ուժեղ շարժում անելով, ձեթի հետ կուլ է տալիս այն առարկան, վորից նա խեղդվել էր:

Պետք է ինկատի ունենալ, վոր կենդանուն հարկավոր է առանձին ախոտի մեջ կեր տալ, այն ել մանր կտրտած, որի-նակ՝ բազուկ, գազար, խիար, կարտոֆիլ և այլն:

Ծանր դեպքերում պետք է դիմել բուժանոցի ոգնություն:

ՄԵՂԻ ԽԱՓԱՆՈՒՄ

Մեղի խափանումը հաճախ պատահում է այգիների և մատակների հետ: Ուրիշ կենդանիների հետ շատ քիչ է պատահում: Մեղի խափանման առաջին նշանները նման են ծակունին: Ձին շարունակ աշխատում է միգել, այսինքն չոտում է հետևի վոտքերը, դուրս բերում սեռական անդամը և յերբ այդ չի աջողվում, ձին սկսում է խիստ անհանգստանալ, չանգոտտում է առաջի վոտքերով գետինը, նայում է իր փորին, անքում ու նետվում գետին:

Մեղի խափանման պատճառը հաճախ լինում է նրանից, վոր ձիուն չեն խնամում, նրան կամ չեն թողնում ժամանա-

կին մեզի, վորից միգապարկում ցավ ե առաջանում, կամ ձին լինում ե անցողակ քամու վրա ե այլն:

Շատ հազվագուրտ ե լինում այն դեպքը, յերբ մեզը խափանվում ե միգաքարից, վորը լինում ե կամ միգափանփշտում, կամ միգանցքում: Յեղել են դեպքեր, յերբ ձիու մեզը խափանվել ե նրանից, վոր միգանցքի ծայրին կուտակվել ե մեծ քանակությամբ մութ մոխրագույն թանձրություն:

ԲԺՂԿԱԿԱՆ ՈՐԿԱՆԻԹՅՈՒՆ

Ամենից առաջ հիվանդացած կենդանուն պետք ե տեղավորել տաք ու արձակ շենքում ե տալ կատարյալ հանգստություն: Կարելի յե զգուշ կերպով, առանց չանգոտումի, դուրս հանել սեռական անդամը ե դիտել, արդյոք թանձրություն չկա միգանցքի ծայրին: Յերբեմն հերիք ե լինում լոկ զգուշությամբ ձեռքը մտցնել հետանցքով ե թեթե կերպով աղիքի ներքևի մասից հուպ տալ միգափանփուշտը այն տեղից, վորտեղ ձեռքով շոշափվում ե գնդաձև ուռեցք:

Անողուտ չի լինիլ նույնպես հարել վոտքերի արանքում: Ծանր դեպքերում իսկույն պետք ե դիմել անասնաբուժանոց, ուր կատետրի (միգանան ձող) միջոցով բաց կանեն միգանցքի բերանը:

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ

Հաճախ պատահում ե, վոր ձին ճեղքում ե իր վոտքը, կամ յեզը հարու յե տալիս պողով կովին ե այլն ու վոտքից սկսում ե արյուն հոսել: Ամեն մի վերք վտանգավոր ե: Մինչև անգամ հազիվ նշմարվող վերքը կարող ե կենդանու մահվան պատճառ դառնալ, վորովհետև վերքի մեջ կարող ե թույն ընկնել, վորից բորբոքում կառաջանա ե ամբողջ մարմինը կհիվանդանա:

Ամեն մի գլուղացի պետք ե պահեստի համար յերկու բինտ (վերքի կապիչ) ունենա, — մեկը մառից, մյուսը քաթանից, — մի քիչ բամբակ, մի փոքրիկ սրվակ յող ե մի շիշ բեկն (սկիպիդար): Յեթե վերքը մեծ չե, հերիք ե միայն վերքին յող քսել:

Ուշոր վերքի ժամանակ, նույնպես ե ուժեղ արյունհոսության ժամանակ վերքը ամուր կերպով փաթաթում են: Վերքը վանում են մաքուր, սառը ջրհորի, կամ ավելի լավ, սառը յեղացրած ջրով, ոժում են յողով, ծածկում հուպ կերպով բամբակով ու սեղմ փաթաթում քաթանի բինտով: Յեթե արյունոտությունը շարունակվի, վերքի վերևից վոտքը ամուր կերպով կապում են փաթաթանով մի քանի ժամով: Այսպիսի կա հպոցը կրկնում են, յեթե կարիք ե լինում:

Լավ ոգնում ե նաև յեռացած ջրի մեջ թրջած, կամ սկիպիդարի մեջ թաթախած մաքուր քաթանը: Գյուղում հաճախ վերքի վրա դնում են սարգի վոստայն, մեզ, հավի փսոր, հող, խոտի տերե, իսկ վնասները կախարդում են արյունը: Այս բոլորը վոշ միայն չի ոգնում, այլ աղտոտում ե վերքը, կենդ յ ունեն ավելորդ չարչարանք ե պատճառում, իսկ տիրոջը վնաս ու հոգս բերում: Ուշոր վիրավորման դեպքում կենդանու պետք ե տանել անասնաբուժարան, կամ հրավիրել անասնաբույժին կամ բուժակին:

Յերբեմն ել արյունհոսությունը լինում ե քթից, բերանից, բայց այդպիսի դեպքերում ավելի լավ ե անհապաղ դիմել անասնաբուժանոցի ոգնության:

ՍՐԲԱԿԻ ՀՈՒՍՅԱՎ

Այս հիվանդությունը պատահում ե սառը ջրից, յերբ արագ վազքից կամ աշխատանքից հետո դեռ չհովացած ձիուն սառը ջուր են տալիս: Յերբեմն ել այս հիվանդությունը պատահում ե ձիաների հետ, յերբ նրանց, ծանր ծննդից հետո, տաքացած ժամանակ, կերակրում են ցորենով, գարիով, հաճարով, վարսակով:

Այս հիվանդությունից սովորաբար վնասվում են միաժամանակ յերկու առաջի, կամ յերկու հետևի սմբակները, բայց յերբեմն ել բոլոր չորս սմբակները միաժամանակ: Հիվանդությունը վրա յե հասնում հանկարծակի կերպով:

Այս հիվանդության ժամանակ վնասված առաջի վոտները դուրս են պրծնում գեպի առաջ, իսկ հետևի վոտները — գեպի

փորձառակը: Ձին մեծ դժվարութեամբ և շարժվում, մանավանդ կռուիտ և կարծր ճանապարհի վրա:

Հետևի վտանգների վնասվելու դեպքում առաջի վտանգները թեքվում են փորի տակը, գլուխն ու վիզը կախ են ընկնում, հետևի վտանգն էլ են թեքվում փորի տակը, վորպեսզի ձին չհենվի առաջի սմբակների վրա: Կճղակները շոշափելու ժամանակ, կամ սմբակի վերևի մասերը սղմելու ժամանակ, ձին ցավ է զգում ու խիստ անհանգստանում:

ԲժՁԿՈՒՄՆ

Հիվանդացած ձիուն առաջին անհրաժեշտ ոգնություն հասցնելը նրանումն է կայանում, վոր հիվանդին պետք է տեղավորել ընդարձակ շենքում, առանց անցողակի քամու և փափուկ ու առատ վտանգալի խոտով: Անհրաժեշտ է խկույն և յետ ձիու չորս վտանգներից ել պայտերը հանել:

Հիվանդության առաջին օրերին պետք է դադարեցնել ձիուն հատիկ տալը, իսկ ջուր տալը սահմանափակել մինչև կես դույլ օրական:

Հոգացավով հիվանդացած ձիաներից հեքիմները առատ արյուն են բաց թողնում: Այդ բանը չպետք է թույլ տալ, վորովհետև նրանք վոչ միայն ոգուտ չեն բերում, այլ և վատացնում են հիվանդության ընթացքը: Ձիու սմբակների վրա հաճախ պետք է սառը ջուր ածել կամ ձյուն դնել, կամ թաց շորով փաթաթել և վրան շուտ-շուտ ջուր ածել:

Յեթե սմբակների ջերմությունը չի անցնում, այն ժամանակ կճղակները պատում են ջրալի կավով, յերբեմն կավի վրա ջուր ածում, մինչև վոր սմբակների ջերմությունն անցնի:

Ձիուն պետք է ներս ընդունել տալ մոտ մի ֆունտ գլատ բեր աղի խառնուրդ, վորպես լուծողական: Իսկ դրսից ոգտավետ է ձիու ամբողջ մարմինը հարել ծղոտով, թրջելով այն ջրախառն սկիպիդարի մեջ: Բայց ավելի լավ է հոգացավով հիվանդացող ձիուն մի անգամից տանել անասնաբուժանոց:

Վ Ե Ր Ք Ե Ր

Վերավորված կենդանուն շատ կարևոր է իսկույն և յետ ոգնություն հասցնել: Վերավորումն լինում է թեթև (մակերե-

վույթային) և խորը: Վերջինից սովորաբար արյուն է հոսում: Մակերեույթային վերավորման ժամանակ, յեթե արյունհոսություն չի լինում, հերիք է ձմեռը յողով ոծել, իսկ ամառը, տաք ժամանակ, ցանել նավթալինի և պաղղեղի (շիբի) փոշիով (հավասար չափով իրար խառնած): Իսկ յեթե վերավորումն խորն է և արյուն է հոսում, պետք է ամենից առաջ կանգնեցնել արյունհոսությունը: Հետո արյան լյարդը զգուշութեամբ հեռացնում են, վերքը ոծում յողով ու փաթաթում չոր, մաքուր բինտով: Իսկ յեթե փաթաթան չի կարելի դնել, այդ դեպքում վերքի վրա նափտալինի և շիբի փոշի յեն ցանում և աշխատում, վոր կենդանին չկեղտոտի, կամ չկոծի այն, կամ չըպառկի նրա վրա:

Իսկ յեթե արյունհոսությունը չի հաջողվում կանգնեցնել, կամ վերքը ծանր է, պետք է շտապել կենդանուն տանել անասնաբուժանոց կամ հրավիրել բուժակին:

Վերքը պետք է փաթաթել օրական մի անգամ, ավելի լավ է առավոտյան և նայել, վոր փաթաթանը վայր չընկնի:

Պետք է ուշադրութեամբ նայել, վոր վերքը միշտ մաքուր պահվի:

Լավ չեն անում նրանք, վորոնք վերքն ոծում են սայլի յուղով, սև կարբոլով, յեղջերվի պոզով, մեզով և այլն, վորից վերջն աղտոտվում է և նրա բժշկվելը ձգձգվում:

Խ Ո Ն Ա Վ Ա Խ Տ

Ոոնավախտ են անվանում ձիու վտանգների մորթու բորբոքումը, վորն առաջանում է սմբակի վերևի մասում: Ոոնավախտով հիվանդանում են մեծ մասամբ այն ձիաները, վորոնք պահվում են աղտոտ և խոնավ ախոռանում: Հիվանդությունն առաջ է գալիս նաև այն դեպքում, յերբ ձին յերկար ժամանակ ման է գալիս ցեխոտ ճանապարհի վրա ու հետո նրա վտանգը չեն մաքրում չոր շորով: Ավելի հաճախ հիվանդանում են հետևի վտանգները, քան առաջի:

Յեթե խոնավախտը թարմ է, հերիք է լվանալ բորաթթիվ (1 թեյի քալ 1 բաժակ ջրին) մարմանդ խառնուրդով, լավ սրբել չոր շորով, ոծել վաղեղիկով և փաթաթել մաքուր բին-

60522-67



տով: Իսկ անխնամ թողած խոնավախտի ժամանակ պետք է նախ նուշն խառնուղղով լվալ ձիու վոտները, մաքուր կերպով սրբել չոր շորով: ասպա վնասված տեղն ոճել նափտալինի յուղով, իսկ այդ յուղը պատրաստվում է մեկ թեյի գդալ նափտալինից, կես թեյի գդալ ցինկի թթվուտից և մի սեղանի գդալ խոզի հալած ճարպից—այս բոլորը խառնում են իրար և հարում:

Իսկ յեթե մորթու վրա ճեղքվածք է բացվում և այնտեղից նեխված հյուսթ ծորում, այդ դեպքում անհրաժեշտ է վնասված տեղը լվալ կարբոլաթթվի խառնուղղով (1 սեղանի գդալ կարբոլյան թթվուտ և 1 շիշ շուր), ասպա վերքը նափթալինի յուղով ցծել ու բինտով փաթաթել: Փաթաթանն ամեն ուր պետք է փոխել: Ճեղքվածքներ յերևալու դեպքում ձիուն պետք է հանգիստ թողնել:

ՊԱՅՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատույտ ճանապարհների վրա, ձմռան խոր ձյունի մեջ, սառույցով պատած գետնի վրա կամ ցեխոտ ճանապարհին ձին հաճախ մեկ վտարը կոխում է մյուսի վրա և պայտով պատում սմբակի վերին մասի մորթը: Կան ձիաներ, վոր միշտ պայտահատում են վտարներ: Այդ պայտահատությունից ձին կաղում է:

Բժշկություն դիմելիս պետք է հիվանդ տեղը մաքրել—մազերը խուզել, իսկ վերքի վրա ընկած մազերը հեռացնել և լրվալ մաքուր ջրով: Յեթե յեղջերյա մասը սմբակից բաժանվել է, նրան պետք է զգուշությամբ դանակով դուրս բերել, վերքը յողով ոճել և վնասված տեղը դնել մաքուր մաուրի կամ բամբակ և հետո փաթաթել:

ՍՄԲԱԿԻ ԶԱՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս հիվանդությունը սմբակի ամենահաճախակի հիվանդությունն է: Պատահում է ձիաներին, յերբ նրանք աշխատում են անհարգ, բարկ հողի վրա և մանավանդ պայտած չեն լիւնում կամ պայտը հուպ չի կաշում սմբակին և նրանց արանքը քար, ավազ կամ այլ բաներ են խցկվում:

Սմբակի ջարդվածքը վորոշում են նրանով, վոր ձին առանց վորևե պատճառի կարծես՝ սկսում է խիստ կաղել, վտարը պահում է կախված կամ չի կոխում գետնին ամբողջովին:

Հիվանդությունն սկզբում ամենից առաջ պետք է հիվանդ վտարից հեռացնել պայտը, յեթե նա պայտած է և վտարը դնել փափուկ կավի մեջ ախպես, վոր կավը պատի ամբողջ պայտը: Կավը շուտ-շուտ թրջել սառը ջրով: Յեթե մի որից ցավը չանցնի, ձին պետք է ցույց տալ անառնաբույժին կամ բուժակին:

Ջարդվածքից խուսափելու համար պետք է հետևել, վոր սմբակն ուղիղ մաքրվի և ուղիղ պայտվի:

ԽՆԱՍՔՈՎ ՊԱՀՊԱՆԻ ԶԻՈՒ ՍՄԲԱԿ:

ԱՌԱՆՑ ՍՄԲԱԿԻ ԶԻՆ ԶԻ ԶԵ:

ԺԺԻ ՄԱՔԻՔՈՒՄԸ

Կովի ծծի պտուկները հաճախ ճաքճքում են: Այդ ճաքճքումը ցավ է պատճառում կովին, ինչու, նա, կթելիս, անհանգիստ է լինում: Ծիծը սովորաբար ճաքճքում է նրանից, վոր ծիծը մաքուր չեն պահում, շարունակ աղտոտվում է մեզից և թրքից: Ծիծը ճաքճքում է նաև շոգ ու փոշոտ որերին, յերբ կովն արածում է արտում: Այդ ճաքճքոցը կարող է յերբեմն ծծի հիվանդություն առաջ բերել:

Կթելուց առաջ և հետո կովի բծերը պետք է մարմանդ ջրով լվանալ: Ճեղքված տեղերը որական մեկ անգամ յողով ուժել, իսկ կթելիս ու նախիր քշելուց առաջ պտուկները պետք է ոճել փաղելինով:

ԺԺԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

Կթի կովերին այս հիվանդությունը հաճախ է պատահում: Ծծի հիվանդությունն առաջ է գալիս նրանից, վոր ծիծը կեղտոտ են պահում, կեղտոտ ձեռքով են կթում, կիթը լրիվ չեն վերջացնում: Բորբոքումը կարող է առաջ գալ ջարդվածքից, ծծերի ճեղքումից, միջատների խայթումից, կովի «ծանրացած»

(հղի) ժամանակ, նաև ծնելուց, յերբ հետո արյունը ստինքում կանգնում է:

Շատ հաճախ է պատահում, վիր փասվում է վոչ ամբողջ ծիծը, այլ նրա մի քառորդը: Յերբեմն հիվանդությունը վրա յե հասնում հանկարծակի, գիշերը (գյուղում ասում են՝ «աչի է դիպել»): Ծծի հետևի մասն ավելի հաճախ է փասվում, քան առաջի մասը: Ծիծը շոշափելիս պինդ է լինում, տաք ու հիվանդոտ: Կովը պակասեցնում է կաթը ու կաթն ել յերբեմն թանձրը «չումի» (տվորոգ) կտորներով է կթվում:

Ծիծն այս դրության մեջ մարմանդ սապնաջրով լվանում են, մինչև չորանալը սրբում ու հիվանդացած տեղը ոծում ու հարում քափուրի յուղով որական յերկու անգամ—առավոտ և գիշերը: Կովին պետք է անպատճառ յուրաքանչյուր 2-3 ժամից հետո կթել, քիչ կեր տալ ու քիչ խմացնել: Առաջին որն և յետ ներսն ընդունել պետք է տալ մի ֆունտ գլաուբեր աղ:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԺՆՆԴԻ ԺԱՄԱՆԱԿ

Դժվար և անուղիղ ծննդաբերությունը գյուղացիական կովերի հետ հաճախ է պատահում և յերբեմն ել վերջանում է մահով: Մինչդեռ ուղիղ և ժամանակին հասցրած անասնաբուժական ոգնությունը կարող է դժվար ծնող կովերի մեծ մասը փրկել:

Սովորաբար ծննդաբերությունն անցնում է նորմալ կերպով և վոչ մի ոգնություն կենդանին չի պահանջում: Հերիք է միայն ծնող կովին, մատակին կամ խողին տեղավորել արձակ, առանց անցողակ քամու, շենքում և հոգալ, վոր կենդանու տակը լինի թարմ ու առատ խոտ: Բայց լինում է, վոր ծննդաբերությունը ձգձգվում է, կենդանին յերկար չարչարվում է և այդ դեպքում մարդուս հմուտ ոգնությունն անհրաժեշտ է լինում:

Դժվար ու անուղիղ ծննդաբերությունը լինում է մի շարք պատճառներից, այն է՝ հղի ժամանակ անուղիղ կերակրելը, վատ խնամք տանելը և այլն: Անուղիղ ծննդաբերությունից տուժում են շատ ջանել կովերը (մինչև 2 տարեկան) և քրնք-

շամորթ, թուլակազմ ու հղիության ժամանակ քիչ շարժողություններ արած կովերը:

Կովերի ու մատակների ծննդաբերությունը դանդաղ է կատարվում: Ոգնության պետք է գալ այն ժամանակ, յերբ կովը անչափ շատ է չարչարվում, հորթուկը չի յերևում կամ դուրս չի գալիս: Նախ քան ոգնելը պետք է իմանալ, թե ինչից է ծննդաբերությունը խափանվում:

Հետադոտությունը ձեռքով է կատարվում: Մինչ այդ պետք է կարճ կտրտել յեղունգները, ձեռքերը տաք ջրով լվալ սապնով և ոծել ձեթով:

Դրանից հետո ձեռքը ծալած մատներով ներս են կոխում հեշտոցը և այստեղ շոշափում հորթի դիրքը: Ուղիղ և նորմալ ծննդի ժամանակ հորթը դուրս է գալիս գլխիցը առաջին վոտների հետ կամ հետին վոտներով ու պոչով: Մնացած բոլոր դիրքերը պետք է անուղիղ համարել: Բայց ծննդաբերությունը կարող է խափանվել նաև հորթուկի դիրքով, յերբ վերջինս չափազանց մեծ է, կամ ծննդաբերական անցքը շատ նեղ է, թեև հորթուկը կարող է լինել և փոքր: Կարող է լինել և այնպես, վոր ծննդաբերական անցքը փոքր չի լինում ու հորթուկն ել վոչ մեծ, բայց ինքը մայրն այնքան թույլ է լինում, վոր ույժ չի ունենում հորթը դուրս բերել:


Յեթե հետադոտելիս (ձեռքով) պարզվեց, վոր հորթն ուղիղ է գալիս, բայց ծննդաբերական անցքը նեղ է, կամ մայրը թույլ, ապա կարելի չե ոգնությամբ դուրս բերել: Դրա համար հորթուկի վոտքին հագցնում են մաքուր շորի ժապավեն ու յերկունքի ժամանակ դուրս քաշում: Առանց յերկունքի ժապավենով հորթուկի վոտքից քաշելը վտանգավոր է: Թույլ յերկունքի ժամանակ կովին կարելի չե տալ կես բաժակ ողի:

Առանց կարիքի չպետք է ձեռքը կոխել ծննդաբերական անցքը: Այս գործը չի կարելի թույլատրել գյուղական տատմայրերին, վորոնք բացի վնասից, ոգուտ չեն բերում:

Դժվար յերկունքի ժամանակ միշտ պետք է հրավիրել անասնաբույժին կամ բուժակին:

ՀԵՃՏՈՅԻ ԴՈՒՐՍ ԸՆԿՆԵԼԸ

Լինում է, վոր մի քանի ուր կամ շաբաթ ծննդից առաջ կամ հետո ամոթի շուրթերի միջից յերևան է գալիս մի փափուկ ծալք, յերբեմն մի բուռնցքի չափ, վորն առանձնապես աչքի յե ընկնում, յերբ կենդանին պառկած է լինում: Հաճախ այս բանը պատահում է կովերին: Ահա հենց սա յե հեշտոցի դուրս գալը: Սա այնքան էլ վտանգավոր չէ: Դուրս ընկած մասը լվանում են մարմանդ ջրով շիբի խառնուրդից (մեկ քառորդ թեյի գգա շիբ մեկ բաժակ տաք ջրին) և զգուշությամբ ներս դնում ամոթի խոռոչը:



ԿՈՎԻ ՀԵՃՏՈՅԻ ԸՆԿՆԵԼԸ

1. Հեցոցի դուրս ընկած մասը: 2. Հեցոցի ծալք


Յեթե կովը պառկած է լինում, պետք է նրա հետույքի տակը շատ խոտ ածել: Իսկ կանգնած ժամանակ պետք է աշխատել այնպես անել, վոր հետույքը առաջից բարձր լինի: Գոտկատեղի վրա պետք է սառցոտ ջրի մեջ թրջած շոր դնել ու նայել, վոր նա չտաքանա:

Հեշտոցի դուրս ընկնելը ծննդաբերությանը չի խանգարում:

ԱՐԳԱՆԴԻ ԴՈՒՐՍ ԸՆԿՆԵԼԸ

Ծննդաբերությունից հետո ամոթի շուրթերի արանքում յերևան է գալիս խիտ խալերով պատած, վառ կարմիր գույնի մի զանգված: Դուրս ընկած մասսան նման է լինում մի մսի տուրակի, վորի վրա յերբեմն մնում են կախված ծին թաղանթի մնացորդը կտորները: Դա յե հենց արգանդի դուրս ընկնելը, վոր պատահում է մեծ մասամբ կովերին: Դյուղում շատերը, յերբ կանչում են անասնաբույժին, ասում են, վոր աղիքն է դուրս ընկել: Հաճախ արգանդի հետ դուրս է գալիս նաև ծին թաղանթը: Կենդանին շատ է անհանգստանում:

Թի մնացորդը կտորները: Դա յե հենց արգանդի դուրս ընկնելը, վոր պատահում է մեծ մասամբ կովերին: Դյուղում շատերը, յերբ կանչում են անասնաբույժին, ասում են, վոր աղիքն է դուրս ընկել: Հաճախ արգանդի հետ դուրս է գալիս նաև ծին թաղանթը: Կենդանին շատ է անհանգստանում:




ԱՐԳԱՆԴԻ ԴՈՒՐՍ ԸՆԿՆԵԼԸ

1. Արգանդի սովորական դիրքը գուրս ընկնելու ժամանակ: 2. Խալի:

Այդպիսի դեպքերում պետք է անհապաղ կանչել անասնաբույժին, իսկ մինչև այդ դուրս ընկած արգանդը պետք է շուտ-շուտ շիբի մարմանդ և թույլ խառնուրդով լվանալ (մեկ քառորդ թեյի գգա շիբ մեկ բաժակ մարմանդ ջրին) և չթողնել, վոր ճանձները նստեն վրան: Իսկ յեթե ինչ-վոր պատճառով չի կարելի անհապաղ անասնաբույժին կամ բուժակին կանչել, այդ դեպքում կովին այնպիսի դիրք են տալիս, վոր նրա հետույքը առաջից բարձր լինի: Դուրս ընկած արգանդը պետք է շիբի խառնուրդով լվալ, հետո արգանդը պատել ձյունով կամ սառույցով: Այդպիսով արգանդը կուչ է գալիս, լծվում ու հեշտությամբ նորից հետ մտցվում: Դրանից հետո, վորպեսզի յերևույթը նորից չկրկնվի, կենդանու զափակին դնում են մի ծանրություն—10 ֆունտ ավագ տուրակում—իսկ հեշտոցի մեջ դնում են մաքուր շորով փաթաթած սառույց կամ ձյուն: Յերբեմն արգանդի հետ տանելուն խանգարում է յերկունքը: Այդ դեպքում կովին տալիս են 2-3 բաժակ ողի, վորպեսզի յերկունքը դադարի: Դժվար դեպքերում անհրաժեշտ է բժշկական ոգնություն, կամ ծայր դեպքում, պետք է անասունը մորթել մնացույթի համար:

ԺԻՆ ԹԱՂԱՆԹԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ

Սովորաբար ծին թաղանթը կամ զավակատունը դուրս ե գալիս նորմալ ծննդաբերությունից 4—6 ժամ հետո: Յեթե զավակատունը 1-2 որով դուրս չի գալիս, դա վտանգավոր չէ: Ծին թաղանթի խափանվելը լինում է արգանդի թուլյ կծկվելուց, յերկար ու դժվար ծննդաբերությունից հետո, կենդանու վատ սնվելուց, նույնպես արգանդի հիվանդանալուց: Զավակատան խափանվելը հաճախ լինում է կովերին: Ծնած կամ վաղաժամ վիժած կովից, ամոթի շուրթերի արանքից, հաճախ մինչև հատակ կախվում են լաթի պես մսի կտորներ—անա դա յե զավակատունը: Յերրորդ-չորրորդ որը զավակատունը սկսում է



ԿՈՎԻ ԶԱՎԱԿԱՏԱՆ ԽԱՓԱՆՈՒՄԸ 1. Զավակատուն: 2. Պոչի փտել-լուծվել, իսկ ծննդաբերական անցքից սկսում է դուրս ծորալ գարշահոտ ու պղտոր-աղտոտ մի հեղուկ: Կովը կորցնում է իր ախորժակն ու կաթը պակասեցնում: Յեթե զավակատունը չհեռացնել, այդ դեպքում կարող է արգանդի ծանր հիվան-

դություն առաջ գալ, վորից հետո կովը կարող է բոլորովին անպտուղ մնալ:

Կովին ոգնելու համար, հարկավոր է 2-3 որ զգուշությամբ որական 1-2 անգամ թեթե կերպով զավակատունը դուրս քաշել: Յերբեմն դրանով էլ գործը վերջանում է, զավակատունն ինքը դուրս է գալիս: Ուժով դուրս քաշել զավակատունը կամ վրան ծանրություն կապել չի կարելի: Չորրորդ որը պետք է անանաբույժին կամ բուժակին հրավիրել: Իսկ կովին անհրաժեշտ է կանգնեցնել մաքուր վտանախոտի վրա, չանջատված զավակատունը կտրել մինչև վտաքի կեսի բարձրությունը և ամեն որ արգանդը վողողել կրեոլինի խառնուրդով (մեկ սեղանի զգալ մեկ շիշ ջրին):

ԺՆՆԳԱԲԵՐԱԿԱՆ ՏԵՆԴ

Ծննդաբերական տենդով հիվանդանում են սովորաբար լավ գեր, կաթնառատ ու շատ անգամ ծնած կովերը: Հիվանդությունը վրա յե գալիս հանկարծակի ծննդաբերությունից մեկ-յերկու կամ յերեք որ հետո: Հիվանդությունը սկսվում է ջերմություն խիստ բարձրանալով (մինչև 41-42 աստ. Յելսի): Հիվանդ կովը վտաքի վրա հաղիվ է կանգնում, խիստ անհանգստանում է, շուտով պառկում է, գլուխը թեքում գեպի կողքը, նայում իր փորին, խիստ ջղաձգություններ անում և այլն:

Հեշտոցի ամոթի շուրթերով արգանդից սկսում է հոսել գարշահոտ, կեղտոտ-թարախոտ մի հեղուկ, շնչառությունը դանդաղում է: Այա ջերմության աստիճանը խիստ իջնում է և հասնում մինչև 35 աստ. Յելսի: Ականջներն ու վտաները պաղում են, ասեղի ծակոց չեն զգում: Հիվանդությունը սկսում է ծննդից մի որ անց ծննդաբերական անցքի վարակվելուց, յեթե կովի տակը մաքուր խոտ չի յեղել, իսկ շենքը յերկունքի ժամանակ կեղտոտ ու աղտոտ է յեղել կամ թե չե ոգնություն ժամանակ կեղտոտ ձեռքերով շոշափել են անցքը:

Վ Ե Ր Զ Ա Ֆ Ա Ն

Գյուղացիներ, լավ հիշեցեք, վոր անասունին զանազան հիվանդություններէց պահպանելը մեկ մարդու գործ չէ: Անասունների առողջութիւնը կարելի չէ պահպանել միմիայն հավաքական ուշիերով, յերբ վողջ հասարակութիւնը կողեկտիվ կերպով առողջացնի անասունների ջրելու տեղերը, արոտատեղը մաքրի տեսակէց և թունավոր խոտերէց, ստորոգ արոտները ցամաքեցնի, կազմի անասունների գերեզմանոց և այլն:

Առանց անասունների հիվանդութիւններից ու կոտորվածքից պահպանութեան չի կարելի անասնապահութիւնը զարգացնել:

Կենդանու հիվանդանալու բոլոր դեպքերում միշտ պետք է առանց ժամանակ կորցնելու դիմել անասնաբուշին կամ բուժակին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏՆԱՅԻՆ ԴԵՂԱՐԱՆ

Յուրաքանչյուր տնտեսութեան մեջ հիվանդացած կենդանիներին առաջին ոգնութիւնը հասցնելու համար պետք է ունենալ տնային դեղարան: Պետք է հետեւել, վոր դեղարանը իր ժամանակին լրացիվ անհրաժեշտ դեղերով, իսկ դեղարանի դեղերը և դործիքները պահվեն մաքուր և չոր տեղ: Տնային դեղարանի համար անհրաժեշտ է ունենալ՝

1) Մեկ թաս և ռետինի խողովակ իր ծայրապանակով լվանալու և կլիզմի (թուլումբայի) համար: Թասի բովանդա, կութիւնը պիտի լինի 10 բաժակից վոչ պակաս: Թասը պետք է պահել մաքրութեամբ և պաղ տեղ, վորովհետև ռետինի խողովակը տաքից ճաքճքում է և անպետքանում:

Թասը կարելի չէ գնել մի քանի տուն միասին: Ծախվում է դեղատանը: Ծայր դեպքում թասը կարելի չէ շինել թիթեղից կամ փայտից, բայց միայն ներսը պետք է ներկել:

2) Սրակիչ, բովանդակութեամբ 100 խորանարդ սանտիմետրից վոչ պակաս: Ծախվում է դեղատնում: Սրակելուց առաջ նախապես փորձել մի քիչ ջրով սրսկում անել, ապա հեղուկը սրսկել:

3) Զերմաչափ (գնել բժշկի կամ բուժակի ոգնությամբ):

Նորմալ ջերմութեան աստիճանն է—

Զիւլ 38,0

Խոշոր յեղջուրավոր անասունի . . . 38,5

Խոզի 39,0

Վոչխարի	39,5
Շան	38,2
Կատվի	38,5
Թռչնի	42,0
Մարգու	36,5—37,5

Նորմալ և համարվում, յեթե ջերմությունը բարձրանում է մեկ աստիճանով ախտեղ բերած աստիճանից: Ջերմաչափը գործածելուց առաջ պետք է նախապես ցնցել: ցնցելը կարելի է սովորել ըուժակից կամ բուժանոցում:

4) Սմբակի դարակ—գնել պատրաստի, անասնաբույժի կամ բուժակի միջոցով:

5) Նշտար (տրոակը)—գնել անասնաբույժի խորհրդով և նրանից ել սովորել, թե ինչպես և վոր դեպքերում գործածել:

6) Յերկու բինտ—մեկը մաուլից, մյուսը քաթանից: Վերջինս կարելի է շինել հին, բանեցրած բարակ յերեսաբեխից (լվացած), վորը կարելի է կտրտել և մի քանի բինտ դարձնել, լայնությամբ 1 և կես—2 վերջով: Ծայրերից մեկ-մեկու կարել, վոր դառնա 3-4 արշին յերկարությամբ: Մեկ ծայրին կպցնել յերկու կտոր թել հանգույց կապելու համար: Մաուլի բինտը ծախվում է դեղատնում: Բինտը պետք է լինի միշտ մաքուր: Գործածելուց հետո պետք է լվալ և յեփ տալ 10 րոպե ջրի մեջ:

7) 50,0 գրամ (մեկ ութերորդ ֆունտ) խոնավաքարշ բամբակ:

8) 100 գրամ մոխրագույն բամբակ:

9) 50,0 գրամ յող (պահել մութ տեղ և սրվակը լավ խցկել):

10) Մեկ շիշ սկիպիդար (բեեկն): Մաքուր սկիպիդարը քսում են առատ արյուն հոսեցնող վերքին. պետք է սկիպիդարով ոձել գժվար լավացող, թարախոտ վերքերը:

11) 4 կիլոգրամ (10 ֆունտ) գլադրեք աղ: Հիվանդ խոշոր յեղջուրավոր անասնին տրվում է մի անգամից 500,0 գրամ

(մեկ և քառորդ ֆունտ)—800,0 գրամ (2 ֆունտ) որական, ձիուն—400,0 գրամ (1 ֆունտ): Խառնում—լուծում են տաք ջրի մեջ և տալիս են շից, վորի պտուկը մտցնում են ձիու բերանի անատամ մասը: Դեղ տալու ժամանակ ձիու գլուխը բարձրացնել վերե, յեղուն դուրս հանել բերանից շի բերանի հակառակ կողմից: Դեղը տալ դանդաղ կերպով, առանց շտապելու:

12) 100,0 գրամ (քառորդ ֆ.) նավթալին: Սմառը կարելի է ցանել վերքի վրա և ոձել յուղով, վոր ճանձեր կամ բոռեր հաստեն վերքի վրա: Գործ է ածվում խոնավախտությունը բժշկելիս, ոձանելիքի ձևով:

13) 10,0 գրամ ցինկի թթվուտ: Գործ է ածվում խոնավախտության բժշկելու ժամանակ, ոձանելիքի ձևով, հետևյալ կազմով. 1 թեյի գդալ նավթալին, կես թեյի գդալ ցինկի թթվուտ և 1 սեղանի գդալ հալած խոզի ճարպ—բոլորը միասին լավ խառնել ու հարել:

14) 25,0 գրամ բորակաթթու: Խառնուրդը պատրաստում են՝ 1 թեյի գդալ թթու մի բաժակ տաք ջրին: Խառնուրդը պահել լավ խցկած շի մեջ:

15) 100,0 գրամ դեղին վազելին: Պահել բանկայում (պուլիում) լավ ծածկած բերանով:

16) 100,0 գրամ բորակային վազելին: Պահել նույնպես:

17) 100,0 գրամ քափուրի (կամֆարա) յուղ: Պահել լավ խցկած շում:

18) 25,0 գրամ շիբի ափաղ, պահել թղթի մեջ, չոր տեղ:

19) 1 շիշ ձեթ:

20) Կես շիշ կրեոլին: Գնել դեղատանը:

Չպետք է մոռանալ, վոր վորքան հաճախ տերը զրույց առնի անասնաբույժի հետ կամ լինի անասնաբուժաբանում, այնքան ել լավ կարելի է պահպանել անասնի առողջությունը:

Յ Ը Ն Կ

	Ե Զ
1. Անասնի առողջությունը բնակչության գործն է	4
2. Հիվանդ անասնին առաջին ոգնություն հասցնելը դժվար բան չէ	6
3. Ձիան աղիքների խիթ (ծակուն)	7
4. Կենդանիների փորի ուռչումը	9
5. Ինչպես վարվել կենդանու խեղդվելու դեպքում	11
6. Մեզի խափանում	12
7. Արյունհոսություն	13
8. Սմբակի հողացավ	14
9. Վերքեր	15
10. Խոնավախս	16
11. Պայտահարություն	17
12. Սմբակի ջարդվածք	17
13. Ծծի հախճումը	18
14. Ծծի բորբոսումը	18
15. Ոգնություն ծննդի ժամանակ	19
16. Հեռոցի դուրս բնկնելը	21
17. Արգանդի դուրս բնկնելը	21
18. Ծին բաղանքի խափանումը	23
19. Ծննդաբերական սեղ	24
20. Վերջաբան	25
21. Տհային դեղատան	26

ՀՀ Ազգային գրադարան



NL0281080

ԳԻՆԸ 6 ԿՈՊ.

1118 [45789 C. 1931-K

8455

68
08

907